ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՄԱՐԹ ՖՐԵՆԴՍ ՍՊԸ -ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/232 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Aitoly	MFC300	Aitoly	Գազի զանգվածային հոսքի կարգավորիչը (սարքը) նախատեսված է արգոնի և այլ իներտ ու ոչ կոռոզիոն գազերի զանգվածային հոսքի ճշգրիտ չափման և ավտոմատ կարգավորման համար: Սարքը պետք է աշխատի ջերմային չափման սկզբունքով և ապահովի կայուն աշխատանք ամբողջ չափման միջակայքում: Հոսքի առավելագույն չափման միջակայքը պետք է լինի 500 sccm, իսկ կարգավորման միջակայքը՝ առնվազն լրիվ սանդղակի 0.2–100 %: Չափման ճշգրտությունը պետք է լինի ոչ պակաս, քան ±0.5 % FS, կրկնելիությունը՝ ոչ պակաս, քան ±0.5 % FS, իսկ գծայնությունը՝ ±0.2 % FS: Սարքը պետք է ունենա ներկառուցված բազմագազային (Multi-Gas) գործառույթ, որը հնարավորություն կտա ընտրել և օգտագործել առնվազն 6 տարբեր գազեր՝ առանց սարքի

				կառուցվածքային փոփոխության: Պետք է ապահովված լինի արգոն գազի (Ar) հետ լիարժեք աշխատանքը: Կառավարումն ու տվյալների փոխանցումը պետք է իրականացվեն RS-485 (Modbus RTU) թվային ինտերֆեյսի միջոցով: Սնուցումը՝ 24 V հաստատուն լարում: Միացման կցամասերը պետք է նախատեսված լինեն 6 մմ մետաղական խողովակի համար: Սարքը պետք է նախատեսված լինի աշխատելու մագնետրոնային փոշեցրման համակարգի (մոդել՝ DC/RF CY-VTC-600-2HD) հետ, ապահովելով համարժեք ներդրված ծրագրային ապահովման առկայություն (System firmware): Սարքի ֆիզիկական չափսերը պետք է լինեն ոչ պակաս քան 48x38x58 մմ և ոչ ավել քան 52x42x62 մմ: Սարքը պետք է ապահովի արագ արձագանքում, ունենա ջերմաստիճանի և ճնշման ազդեցության ավտոմատ կոմպենսացիա և նախատեսված լինի մաքուր, չոր և ոչ կոռոզիոն գազերի հետ շարունակական աշխատանքի համար: Սարքը պետք է լինի նոր, ներառի զանգվածային հոսքի կարգավորիչը, անհրաժեշտ միացման կոնեկտորը, շահագործման տեխնիկական փաստաթղթերը, գործարանային կալիբրացման վկայականը և առնվազն 12 ամիս երաշխիք:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО СМАРТФРЕНДС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЬҶՀ-ԷԱՃԱҶՋԲ-26/232 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
1				